

նոս : Եւ նորա ոչ ումեքէ չերկնչին , եւ զինչ 1:0
կամին առնեն , զի բազումք են :

Եւ մեծի շարաթ իրիկունն նախ սուրբ
Պետրոսի մեծ զանկակն հնչեն , եւ ապա
զայլսն :

ՀԱՆԴԷՍՔ ԶԱՏԿԻ

Եւ կայ մեծ եկեղեցի մի սուրբ Յակոբ
առաքելոյն Զերեթեայ . եւ առջեւն մեծ մօյ-
տան , ուր Սպանիու թագաւորին էլչին կու
կենայ . եւ ամէն տարի զատկի զիշերն մինչ
ի լոյս մեծ շնչիք կու լինի եւ տօնամայ եւ 5
չօհրաթ : Զի ամիս մի յառաջ պատրաստու-
թիւն կու տեսնուն , բերթեր զանազան եւ խու-
լայք . խաղուխնի զարկին քանի հազար եւ վրան
ամէն Ֆէնէր . եւ պատերն ամէն շուկին խու-
մաշով եւ շուխով զարգարած , ծառեր եւ 10
ճղեր կանգնեցուցած . եւ փողոցէ փողոց բա-
րակ թէլ պղնձէ անցուցած . նոյնպէս պա-
տուհանից պատուհանս՝ ԺԴ , ԺԵ տեղ : Մէկ
թէլին վրայ շինեցին մեծամեծ վիշապք դէմ
յանդիման վասն կովի , եւ միւսն կազմեցին 15
ձիաւորք , մզրախնով եւ բրմպով , եւ այլն
ծովային կենդանիս . եւ զկնի ամենայնի ի
վերայ բարձր ձողի զաստանայ շինեցին կան-
դուն եւ դժոխոց բանալին ի ձեռին . եւ այն-
պէս դէմ նորա Գարբիէլ հրեշտակապետն գե- 20
ղարդով : Իսկ կանթեղք զանազան եւ ազգի
ազգի գունովք՝ իբրեւ զաստեղս երկնից բազ-

152 յիրիկունն :

15 միւսըն : — 18 ձողի :